ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: aspired@engl.com

2018թ.-ի ապրիլի 11-ի նախամրցութային հանդիպում

Պարզաբանումներ

IFB # 040418-01 ՊԷ խողովակների, կցամասերի ձեռքբերում և խողովակաշարի մոնտաժման աշխատանքներ Սայաթ-Նովա գյուղում ջրի կրկնակի օգտագործման և ոռոգման համակարգի բարելավման ծրագրի շրջանակում

Ամիս, ամսաթիվ՝ 11 ապրիլի, 2018թ. Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ձեր կազմակերպության կողմից նախկինում հայտարարված հրավերներում հայտին կից կար աղյուսակ: Այս անգամ կայքում չգտանք աղյուսակը, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի ցանկը: Խնդրում ենք պարզաբանել:	Այս հայտարարությունը նոր ձևաչափով է և բավականին ծավալուն: Հայտի հետ կապված բոլոր մանրամասները և պահանջվող փաստաթղթեր ցանկը կարող եք գտնել «հայտատուների համար ուղեցույց» բաժնում: Աղյուսակը՝ «գնառաջարկի ձև» կոչվող հավելվածում:
2.	Խնդրում ենք պարզաբանել ինչո՞ւ է անհրաժեշտ DUNS համարը և ինչպե՞ս կարող ենք ստանալ:	Ինչպես նշված է ՀՆՀ-ում կազմակերպության համար պարտադիր պահանջ է հանդիսանում DUNS-ի համարը ME&A-ին տրամադրելը: Տվյալների համարակալման ունիվերսալ համակարգը (http://fedgov.dnb.com/webform/pages/CCRSearch.jsp) մշակվել և կարգավորվում է «Dun & Bradstreet» (D&B) ընկերության կողմից: Ըստ այդ համակարգի՝ յուրաքանչյուր ընկերությանը վերագրվում է եզակի թվային նույնականացման համար, այսուհետ՝ «DUNS համար»: DUNS համարի բացակայության դեպքում ME&A-ն չի կարող հայտատուին դիտարկել որպես նրա հետ «պատասխանատու» բիզնես վարելու միավոր և, հետևաբար, ME&A-ն ենթակապալի պայմանագիր/գնման պատվեր կամ դրամական համաձայնագիր չի կնքի նման կազմակերպության հետ: Հայտատուն սույն ՀՆՀ-ի հաղթող կճանաչվի միայն ME&A-ին DUNS համարը տրամադրելուց հետո: DUNS համար չտրամադրող հայտատուները մրցույթից դուրս կմնան, և ME&A-ի կողմից կընտրվի հաջորդ համապատասխանող հայտատուն: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային ենթակապալի

		պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
3.	Հայտ ներկայացնելու հրավերից հասկացել ենք, որ բացի հողային աշխատանքներից մնացած բոլոր աշխատանքները իրականացվելու են հաղթող կազմակերպության կողմից:	Այո
4.	Հայտում նշված է, որ պետք է տեղադրել 10 մետրանց խողովակներ: Հնարավո՞ր է այս պահանջը փոխել:	Առաջարկում չի պահանջվում տեղադրել 10 մետրանոց խողովակներ. այդ երկարությունը պայմանականորեն հիմք է ընդունվել կարերի թիվը հաշվարկելու համար:

Հարցելի հայտատուներ, DUNS համար ստանալու հետ կապված դժվարություններ ունենալու դեպքում կարող եք զանգահարել (095) 345 543 հեռախոսահամարով:

Ինչպես նշված է հայտում, ոչ մի հանդիպում, բանավոր հարց կամ հեռախոսազանգ չի ընդունվի IFB # 040418-01 ՀՆՀ -ի վերաբերյալ նախամրցույթային հանդիպումից հետո: